

անդամ. երբ բարի աջ մը, հաւատքէն դողդոջուն, կենակից սիրոյ նաբօտը կ'օրհնէ ամուսնական ուխտի խորանի մը առջեւ, երբ մահուան հանդէպ զալարուող հիւանդի մը դէմքը յանկարծ կեանքի ժպիտովը կը լուսաւորուի. երբ սրտի և կամքի չնորհ- ներով զարդարուած պատանիի մը մտքին մէջ մեծ ապագայի մը երազը կը սաղ- մնաւորուի: Ի՛նքն է որ անաղանդերու մոռնչին մէջէն յոյսին ջինջ հնչիւնը լսելի կ'ընէ. եւ արիւնաթաթաւ դիակներու կողքին կանգնած՝ կը մասնանշէ նոր եւ ամբիժ արշալոյսերու զեղեցկութիւնները:

Վասնզի հրաշագործակ եւ անմահ Սէրն է ինքը, իր Հաւատքովը աւե- տարանուած՝ աշխարհի: Ի զուր չէ որ քսան դարեր իր անունին առջեւ անդադ- րում համերգած են. «Փառք Քրիստոսի ամենազօր Յարութեան»:

* * *

Խ Ր Ա Ծ Ն Ա Ի Ը

Արդ, ան տեսաւ որ ձրկնորսներն, ոտներնին մէջը աւազին,
Իրենց նաւակը դէպի բացը հանելու կ'ընէին ճիգ,
Կը հրէին զայն ետէն, չլաններէն կը փախէին,
Մինչ ան կարծես երկաթներով փակչած էր իր տեղին սասիկ:

«Հակառակ հով պիտի ըլլայ». — հայնուչներուն մէջ անոնց բիւրս,
Յառաջացաւ ան խաղաղիկ. ու, բրնձեղով ծայրէն ցուկին,
Արօրադրող եզի մը պէս փառաց զայն, բայց ինքն անխլիւրս.
Ու երբ փլուրբաւ նաւն իր կայէն, ալիքն առաւ զայն վեր ուժգին:

Որովհետեւ կը հանչնային անոնք իր խօսքն ասուածային,
Անոր վրսեմ պարզութենէն ամէնքն եղան ըզմայլահար,
Ու ըզգացին քէ Տէրն ի՛նչպէս մըսած էր մէջն իրենց կուրծքին,
Բարի հողմէ մը հոն շրջած զեփիւռին հետ զրարբարար:

JEAN AICARD

